Լեռ
2115

1999

ՑԱՒԵԼՈՒԱԾ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ

# ԲԱՌԱՐԱՆ

## ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՅՍԵՐԻ

ԼԱՏԻՆԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ

Աշխատութիւն

Առողջապահական Թերթի Խմբագրի եւ Երեւանայ քաղաքային Բժշկի

ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

ԵՐԵՒԱՆ

1883

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ հայ բժիշկներից մէկը, նկարագրելով մի որև է հիւանդութիւն, ցանկանայ նշանակել թէ ի՞նչ դեղ պէտք է հիւանդը գործ ածէ, նա պատահելու է մեծամեծ դժուարութիւնների, որովհետև չունենք ո՛չ հանքային դեղերի և ո՛չ էլ բժշկական բոյսերի հայերէն բառարան։ Հանքային դեղերի անունները դեռ կարելի է գտնել հայերէն տպագրուած քիմիայի ձեռնարկների մէջ, թէպէտ և մեծ դժուարութեամբ և ոչ բոլորը, բայց բժշկական բոյսերի անունները ոչ մի գրքում գտնել չի կարելի, որովհետև մինչև այժմ ո՛չ ոք մանրամասնաբար չի աշխատել ժողովելու այդ ամենակարեւոր բառերը։

Ճշմարիտ ասած են, որ այս ինչ կամ այն ինչ ձեռագիր բժշկարանի մէջ կայ բուսաբանական հարուստ բառարան, բայց գրանցից շատերը ձեռքս առնելով համոզուեցի, որ մեծ մասամբ անպէտք են, միայն մանրամասնաբար նշանաւոր է Ամիր—Դովլաթի ձեռագիր բժշկարանը։

Միայնակ և խելացի կազմած բառարանն է բժիշկ Ստեփաննոս Տէրմինասեանի Տփխիսեցւոյ բառարանը, հետևեալ վերնագրով՝ «Տընկաբանութիւն և փորձոյ Հայաստանի,» որ վերջացրած է 1818 թ. Յունիսի 20ին։ Ես ստացայ այդ ձեռագիրը պ. բժ. Բարօվից։

Այդ ձեռագրից քաղեցի միայն մի քանի բժշկական

կարևոր բոյսերի անուններ, իսկ բժշկական բոյսերի մեծագոյն մասը նաև այդ բառարանում չըկայ, որովհետև բժ. Հաբիմանեանը, ինչպէս երևում է նրա աշխատութեան վերնագրից, մտադիր չէ եղել բժշկական բոյսերի բառարան կազմելու, այլ բուսաբանական կարճառօտ բառարան, այն էլ Վրաստանում աճելու:

Բժշկական բոյսերի բառարան չունենալու պատճառով, բժիշկներս ստիպուած ենք լինում տեխնիքական հարկաւոր բառերն երկար ժամանակ իզուր պտռելուց յետոյ՝ չըգտնել և հրաժարուել աշխատանքից:

Այս տեսակ դժուարութիւնների պատահելով, ես 3 տարի շարունակ աշխատեցի կազմել բառարան այն բժշկական բոյսերի, որոնք այժմ գործածվում են Եւրոպական բժշկականութեան մէջ:

Բնակուելով Երևանում ինձ յարմար էր պարապել այդ գործով:

Բառանում նշանակուած տեխնիքական բառերը գտնելու համար՝ Դորպատից բերել եմ հետս բժշկական բոյսերի հաւաքածու (Կօլէկցիա) և հրաւիրելով Երևանայ հայ դեղավաճառներին (մանրուք ծախողներ), ազգային հայ հեքիմներին (կին թէ տղամարդ) և ցոյց տալով հաւաքածուս՝ ստուգել եմ մասամբ այն տեխնիքական բառերը՝ որ ժողովել եմ մեր գրականութիւնից և պակասը լրացրել եմ այդ անձանց յայտնած տեխնիքական բառերով:

Չը հաւատալով այդ հեքիմների ու դեղավաճառների գիտութեանը, ես առաջ մէկին էի խնդրում որոշել հաւաքածուիս բոլոր պրէպարատները և յետոյ միւսին մի առանձին օր հրաւիրելով ու թագցնելով առաջինից իմ գիտեցածս, խընդրում էի որոշել հաւաքածուիս պրէպարատները: Եթէ մի քանի դեղավաճառներ կամ հեքիմներ միևնոյն դեղին միակերպ անուն էին տալիս, այն ժամանակ այդ դեղի անունն ընդունում էի ինչպէս ժողովրդի մէջ գործածական տեխնիքական բառ և գցում էի բառարանիս մէջ: Հաւաքածուիս մէջ կային այնպիսի բժշկական բոյսեր, որոնց չէին կարողանում ճանաչել դեղավաճառները և հեքիմները, այդ տեսակ պրէպարատները շատ անգամ տանում էի հետս Արարատեան դաշտի գիւղերը և գիւղական մարդկանց ցոյց տալով և բացատրելով յատկութիւնները, գտնում էի բոյսի գործածական անունը. երբեմն խնդրում էի ծանօթներիս (տալով նրանց բոյսի անտակից), որոնք բնակվում էին միմեանցից զանազան հեռու տեղերում գ. օ. Իգդիրում և Սևանայ ծովի կողմերում, իմանալ նշանակած բոյսի անունը և ընդունում էի դրանց բերած տեխնիքական բառերն այն դէպքում, երբ այդ բառերը միանման էին: Իսկ այն բոյսերը, որոնց անունները անկարելի եղաւ գտնել, նշանակեցի լատիներէն և հայերէն տառերով:

Երևանայ քաղաքային բժիշկ լինելով, պարտաւոր եմ հսկել քաղաքային բանտի հիւանդների վրա և հոգալ բոլոր բանտարկեալների առողջութեան մասին: Բանտում միշտ լինում են հայ կալանաւորներ զանազան տեղերից և Երևանայ նահանգի բոլոր կողմերից: Այդ դժբաղդների գի-

ութիւնից էլ օգտուել եմ քաղել, ցոյց տալով նրանց պրեպարատները (բոյսերի տեսակներ), որոնց անունները որոշելու համար։

Իմ ժողոված բառերը համեմատելով Ամի-Դօվլաթի բժշկարանում գտնուած (ինչպէս կային) բառերի հետ, տեսայ որ ինչքան այդ գրքում կային մեծ մասամբ միևնոյն խօսքերն էին, որ ապացոյց է թէ այս բառարանիս մէջ տեղաւորածը ժողովրդականացած տեխնիքական բառեր են։

Այս տեսակ հնարքներով ժողովեցի բոլոր այն բժշկական բոյսերի հայերէն անունները, որոնք այժմ գործածւում են Եւրոպական բժշկականութեան մէջ։ Այս բառարանս, որ բաղկացած է 208 պրեպարատների անուններից, կազմուած է լատիներէնից Հայերէն և Ռուսերէն, որպէս զի թարգմանութիւնների ժամանակ հեշտ գործածելի լինի և փոքր ի շատէ մօտեցնելի լինի հասարակութեան այն զարգացած մասին, որ լատիներէն անունների հետ ծանօթ չէ։

Կասկած չկայ, որ այս տեխնիքական խօսքերը միակերպ չեն կարող լինել մեր երկրի իւրաքանչիւր նահանգում կամ գիւղում, որովհետև երկրի իւրաքանչիւր մասում առհասարակ տալիս են բոյսին առանձին անուն, որ սեփական է միայն վերաբերեալ տեղին։ Բոլոր երկիրներում բոյսերի անունները միևնոյն օրէնքին են ենթարկւում և երկրի բժիշկները գործ են ածում այն անունները, որոնք աւելի ընդհանրացած են։

Այս բառարանս պէտք է համարել հիմք բժշկական բոյսերի հայերէն անունների համար, մանաւանդ որ այս



տեխնիքական բառերը մեծ մասամբ գործածական են Արարատեան նահանգում և թեթևամտութեամբ ժողոված չեն, այլ իւրաքանչիւր բառի նշանակութիւնը ըստուգել եմ քաղաքներում ու գիւղերում զանազան հմուտ անձանց օգնութեամբ։

Տպագրելով բառարանս՝ առաջարկում եմ մեր հասարակութեանը, մանաւանդ հայ բժիշկներին, օգտուելու և հարստացնելու։

Շնորհակալութեամբ կընդունեմ այն անձանց նկատողութիւնները, որոնք այս հարցով պարապած են, որոնք ժողոված ունեն այս բոյսերի հայերէն անունները զանազան գաւառներում։ Այդ կերպիւ կը հարստացնեմ այս բառարանս երկրորդ տպագրութեան ժամանակ, երբ հարկը պահանջէ։

Լ. Տ.

# ԲԱՌԱՐԱՆ

## ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՅՍԵՐԻ, ԼԱՏԻՆԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ

| | | |
|---|---|---|
| **A.** | | |
| Aloe | Հալուէ, ալօյ | Сабуръ |
| Asa foetida | Անգուժատ, փորշախունկ | Вонючая смола |
| **B.** | | |
| Baccae juniperi | Պտուղ գիհոյ, կատուա-խաղող | Можжевельныя ягоды |
| — lauri — | Պտուղ դափնւոյ | Лавровыя ягоды |
| — spinae cervinae | Պտուղ ճորկի, եղջերա-փուշ | |
| **C.** | | |
| Capita papaveris | Խաշխաշ, մէկոն | Маковки |
| Caryophylus aromaticus — | Մեխակ հոտաւէտ | Гвоздика душистая |
| Catechu — | Քաթէ հնդի | Кучъ |
| Colocynthis — | Կոլոկինթ, վայրի դդում | Горькая тыква |
| Coculi indici — | Ձկնդեղ | Рыболовныя ягоды |
| Colophonium — | Ջամի մաստակ | Канифоль |
| **Cortices** | Կեղեւներ | *Корки* |
| Cortex aurantiorum | Կեղև թուրինջի | Корка померанцовая |
| — cascarillae — | Կ. քասքարիլի | к. каскарильная |
| — canellae albae | Կ. սպիտակ դարչնի | к, бѣлой корицы |
| — cassiae caryophylatae — | Կ. կասսիայ մեխակահոտի | к. кассіи гвоздичной |
| — cassiae cinnamomiae — | Կ. չինաց դարչնի | к. китайской корицы |
| — cassiae surinamensis — | Կ. կասսիայ սուրինամի | к. суринамскойкорицы |
| — chinae fuscae | Կ. մուգ քինայի | к. бурой хины |

| | | |
|---|---|---|
| — chinae regiae | կ. արքայական քինայի | к. королевской хины |
| — cinamomi acuti | կ. թունդ դարչնի | к, острой корицы |
| — fructus aurantiorum | կ. թուրինջի | к. померанцовыхъ ягодъ |
| — guajaci — | կ. սուրբ փայտի, կռճի-հնդի | к. бокоутная |
| — hypocastani | կ. վայրի շագանակի | к. дикаго каштана |
| — nuccum juglandium — | կ. ընկուզի | к. грецкихъ ореховъ |
| — quercus — | կ. կաղնույ | к. дубовая |
| — radicis granatorum | կ. նռնույ | к. гранотовая |
| — ramni frangulae | կ. դժնիկի | к. крушины |
| — sassafras — | կ. սասսաֆրասի | к. сассафраса |
| — simarubae | կ. սիմարուբայի | к. с! м рубы |
| — ulmi interior | կ. կնձնի | к. илимовая |
| — vinteranus | կ. վինտերանի | к. винтерова |
| — crocus | Քրքում, զաֆրան | — шафранъ |
| F. | | |
| Flores | Ծաղիկներ | *Цвѣты* |
| Flores aurantiorum | Ծաղիկ թուրինջի | Цвѣты померанцовые |
| — arnicae | ծ. ոչխարախոտի | ц. горнаго баранника |
| — calendulae | ծ. վաղենիկի | ц. аптечнаго ноготка |
| — chamomillae romanae | ծ. երիցուկի, օշօշի, պա-պունեջի | ц. римской ромашки |
| — cinae | ծ. խորասանի | ц. цытварные |
| — farfarae | ծ. դարատերևի | ц. бѣлоконытника |
| — foeniculi | ծ. սամիթի | ц. аптечнаго укропа |
| — lamii albi | ծ. սպիտակ եղնձամոլի | ц. бѣлой крапивы |
| — laurocerasi | ծ. դափնեկեռասի | ц. ловревишневые |
| — lavendulae | ծ. նարդոսի | ц. лаванды |
| — malvae arboreae | ծ. ծառի տուղտի | ц. древеснаго проскурняка |
| — malvae cilvestris | ծ. վայրի տուղտի | ц. дикаго проскурняка |
| — meliloti | ծ. կոճկանի, եօնջայի, մեհրաբուսասի | — люцерна, енжы |
| — millefolii | ծ. հազարատերևուկի | ц. тысячелистника |
| — paeoniae | ծ. պեօնի | ц. піоны |



| | | |
|---|---|---|
| — rhododendreni chrysanthi | ծ. իշադեղի | ц. сибирской розы. пьянишника |
| — rasarum rubr. | ծ. կարմիր վարդի | ц. розы красной |
| — sambuci | ծ. թանթրվենույ, դան-թափի, խնդեղի | ц. бузины |
| — tiliae | ծ. լորի | ц. липы |
| — verbasci | ծ. փլոմոսի | ц. царскаго скипетра |
| Foliae | Տերևներ | *Листья* |
| Folia aconiti | Տերև մանեխայի, գայ-լաստակի | Листья аконита |
| — althaeae | տ. մոլ շի, սինձի | л. проскурятника |
| — bucco | տ. բուկկօ | л. букко |
| — digitalis | տ. մատնոցուկի | л. наперстянки |
| — lauri | տ. դափնույ | л. лавровые |
| — laurocerasi | տ. դափնեկեռասի | л. лавровишневые |
| — levistici | տ. կարդեղի | |
| — menthae crispae | տ. անանուխի | л. кудрявой мяты |
| — menthae piperitae | տ. անգլիական անանուխի | л. англійской мяты |
| — menthae silvestris | տ. դաղձի | л. дикй мяты |
| — rhododendreni | տ. իշադեղի | л. сибирской розы пьянишни а |
| — rosmarini | տ. նաձի, լենտոպանկի, լենտոցանկի | л. розмарина |
| — sabinae | տ. ցրվենի | л. козачьяго можжевельника |
| — sennae | տ. սինամաքիի, սաձալի | л. сены |
| — tanaceti | — բագմենակի | — обыкновеной пижмы |
| — trifolii fibrini | — առուոյտի | — жабника |
| — uvae ursi | — արջախաղողի | — медвѣжьяго винограда |
| Fructus | Պտուղներ | *Плоды* |
| Fructus anisi | Պտուղ անիսոնի | Плодъ аниса |
| — berberis | — զրիշկի, ծոր, կծո-խուր | — барбариса |
| — capsici annui | — կարմիր պղպեղ | — турецкаго перца |
| — cerasi acidi | — բալ, կեռաս | — кислой вишни |
| — citri | — կիտրոն | — лимонъ |
| — coriandri | — գինձի, սամիթի | — коріандра |
| — fragariae | ելակ | — земляника |
| — jujubae | ունաբ | — грудные ягоды |

| | | |
|---|---|---|
| — mori albae | — Թութ | — шелковница бѣлая, тута |
| — mori nigrae | — Խարթութ | — шелковница черная, тута черная |
| — napi | — Շնտուրի | — брюквa |
| — oxyccoci | — պաղպահատ | — клюква |
| — ribis | — Հաղարջ | — смородина |
| — rubi idaei | — Մորի | — малина |
| — sorbi | — Սնի | — рябина |
| — tamarindorum | — Թամրի | — тамаринда |
| **Funges** | **Սունկեր** | *Грибы* |
| Fungus laricis | Բէտնի | Агарикъ |
| — sambuci | Գայլի սունկ | Б.з иный грибъ |
| **G.** | | |
| Gallae turcicae | Գխտոր | Чернильные орѣшки |
| glans quercus | Պտուղ կաղնւոյ | Дубовые желуди |
| grana tiglii | Տանդ, արեւտալթի | Кротоновое сѣмя |
| grana paradisi | Հոշտրուակ | Райскія зерна |
| gummi | Խիժ, կուէժ | Камедь |
| gummi ammoniacum | Ուշակ, օշակ | Камедистая, аммоніачная смола |
| — arabicum | Խիժ արաբիոյ | Аравійская камедь |
| — benzoe | Կնդրուկ | Росноладо: н ія камедь |
| — galbanum | Խիժ քաղբանոյ | Гальбанъ |
| — guttae | Դեղնախիժ | Гуммигутъ |
| — guajacum | Սուրբ փայտի կամ կոճի հնդի խիժ | Бакаутная смола |
| — myrrhae | Զմուռ | Мирра |
| — olibanum | Խունկ | Ладонъ |
| — thraganthae | Գազի խիժ | Трагакантъ |
| **H.** | | |
| **Herbae** | **Խոտեր** | *Травы* |
| Herba absinthii | Խոտ օշինդր | Трава полынь |
| — aconiti | Խ. մեռնայի, գայլատակի | — аконитъ |
| — altheae | Խ. մոլոշի, նաձի | — аптечный проскурятникъ |
| — belladonnae | Շիկատակ, մնդրագատակ | — красавка, одурникъ |
| — centauri minoris | Խ. փոքր տերեւուկի | — золототысячникъ |



| | | |
|---|---|---|
| — conii maculati | Խ. մոլախինդի | — болиголова |
| — digitalis | Խ. մատնոցին Ձ. | — наперстянка |
| — dulcamarae | Խ. ձարաբալախ | — посленъ |
| — farfarae | Խ. գարատերեւի | — бѣлы копытникъ, мать и мачиха |
| — fumariae | — անձխոտի | — дымянка |
| — hyosciami | Խ. ալու աշրանդի | — черная бѣлена |
| — polygolae | Խ. գայակնիձի | — истодъ |
| — pulsatillae | Խ. կաղաջ լռնոյնի | — вѣтреница луговая |
| — salviae | Խ. քարացունծի, եղէսպակի | — шалфей |
| — serpylli | — ուրց | — богородская трова |
| — tanaceti | — լուի խոտ, մեղուամուշի | — дикая рябинка |
| — taraxaci | Խ. երկրգի, դեղնածաղկի | — одуванчикъ |
| — trifolii fibrini | Խ. առուոյտի | — жабникъ |
| **L.** | | |
| Lactucarium | Հազար | Лактукарій |
| Lichen caragheen | Մամուռ կարագէն | Карагенъ, ирландскій мохъ |
| — islandicus | — իսլանդիայի | Исландскій мохъ |
| — pulmonarius | — առուսմար | Плющевой мохъ |
| Lignum fernambuci | Կարմիր փայտ | Красное бразильское дерево |
| — guajaci | Սուրբ փայտ, կոճի հնդի | |
| — juniperi | Փայտ գիհոյ, կառուախաղողի | Можжевельное дерево |
| — santali rubr. | Սանտալ | Красное сантальное дерево |
| — sassafras | Սասսաֆրաս | Сассафрасъ |
| **M.** | | |
| Macis | Մուշկի ծաղիկ | Мускатный цвѣтъ |
| **N.** | | |
| Nux moschata | Մուշկ, գաղիկրուակ | Мускатный орѣхъ |
| Nux vomica | Կոճապակ, ործայուցիչ ընկոյզ | Чилибуха |
| **O.** | | |
| Opium | Թրիաք, աֆիոն | Опій |

| | | |
|---|---|---|
| **P.** | | |
| Papaver | Խաշխաշ, մեկոն | Макъ |
| Piper album | Սպիտակ պղպեղ | Перецъ бѣлый |
| — cubebarum | Դեղի բուռակի պղպեղ | Кубеба |
| — longum | Երկար կամ պարայպղպեղ | Длинный перецъ |
| — nigrum | Սև պղպեղ | Черный перецъ |
| Poma aurantiorum immatura | Խակ թուրինջ | Незрелая померанцовая ягода |
| **R.** | | |
| Radices | Արմատներ | Корень |
| Radix aconiti | Արմատ մանեկայի, դայլատակի | Корень аконита |
| — acori | ա. եղեգնաշամամի | Акора |
| — alcanae | ա. հինայի | Красильной червеницы |
| — althaeae | ա. մոլշի, անձի | Оптечной просвирняка |
| — amomi | ա. համեմունկի | Корень незрѣлаго анлійскаго перца |
| — angelicae | ա. հրեշտակախոտի | к. антечнаго дягиля |
| — artemisiae | ա. գնածուղի | к. артемизіи |
| — asparagi | ա. ծնեբեկի | к. спаржи |
| — bardanae | ա. կռատուկի | к. лапушника |
| — bryoniae | ա. լոշտակի | к. переступни |
| — calami | ա. խունկեղեգնի | к. ира |
| — caricis arenarii | ա. թուրշայի | к. песочной осоки |
| — chinae | ա. քինայի | к. хины |
| — colchici | ա. ձիւնածաղկի, սեակածնի | Сѣмя безвременника или луговаго шафрана |
| — colombo | ա. զեւրումթի | к. коломбо |
| — curcumae | ա. դեղին կոճի | к. куркумы |
| — filicis maris | ա. արու պտերի | к. мужескаго папоротника |
| — galangae | ա. կալինջանի, խաւրոփաղեղի | к. галанги |
| — gentianae rubrae | ա. կարմիր դեղնախտայի | к. гарчевки |
| — graminis | ա. սեզի | к. пырея |
| — hellebori albi | ա. սպիտակ եղբորոսի, կանչխոտի | к. бѣлой черемицы |
| — hellebori nigri | ա. սև եղբորոսի կամ կանչխոտի | к. черной черемицы |



| | | |
|---|---|---|
| — imperatoriae | ա. մարդոյնծաղի, բարաւոզի, մարդաստամիթի, կայսերարքայի | Царскій корень |
| — ipecacuanhae | ա. ոսկեատկի | Рвотный корень |
| — iridis florentinae | ա. շուշանի, գմբեկի | к. фіалковый |
| — jalappae | ա. գիշերապաղուածի, գիշերակեղի | к. ялапы |
| — lapati acuti | ա. թրթնջուկի, աւելուկի | к. туполистаго щавеля |
| — levistici | ա. վայրի կամեղեղի | к. зори |
| — liquiritiae | ա. մատուտակի, մայրուխի | к. лакрич ика |
| — peoniae | ա. պիոնախինի | к. піоны |
| — pimpinellae | ա. սեւտափակի կամ սեւորդնաքարի | к. камоломна |
| — rhei | ա. խաւշերեղի | к. ревеня |
| — rubiae tinctorum | — տորոնի | к. красильной морены |
| saponariae rubrae | ա. չոգանի, մարտակի | к. оптечной мыльнянки |
| — sarsaparillae | ա. սարսապարնայի | к. сарсапарилы |
| — scillae | ա. մծղակի | к. морскаго лука |
| — senegae | ա. սենեգայի | к. сенеги |
| — serpentariae | ա. օձախոտի | к. виргинскаго змѣевика |
| — taraxaci | ա. եղերդի, դեղնածաղկի | к. одуванчика |
| — tormentillae | ա. անկոզարի | к. узика |
| — valerianae | ա. կատուախոտի | к. валеріаны |
| — zedoariae | ա. անդուկի | к. цытварный |
| — zingiberis | — սալ կոճ | к. имбира |
| **S.** | | |
| Scammonium | Սկամոնի | Скамоній |
| Secale cornutum | Ցոլէկ | Спорыня |
| Semina | Սերմեր | *Сѣмена* |
| Semen amomi immaturus | Սերմ խակ համեմունկի | Сѣмя незрѣлаго англійскаго перца |
| — aneti | ս. սամիթի | с. укропа |
| — anisi stellati | ս. աստղաձեւ անիսոնի, բադիանի | с. бадьяна, звѣздчатаго аниса |
| — canabis | ս. կանեփի | с. конопли |
| — cardamomi | ս. հիլ | Кардамонъ |

| | | |
|---|---|---|
| — carvi | ս. կարվինի | с. тминое |
| — colchici | ս. ձիւնածաղկի, սէտ-կաճնի | с. луговаго шафрана |
| — cydoniae | ս. սերկևլի | с. айвы |
| — cinae | ս. խորասանի | с. цытварное |
| — foeniculi | ս. գոււմայի | с. укропное |
| — foeni graeci | ս. Հայհամեմի, շամբա-լիլակի | с. пажитника |
| — hyosciami | ս. ազու աշխանդի | с. бѣлены |
| — licopodii | ս. գետնամուշկի | с. плауна |
| — lini | ս. կտաւ ատի | с. льняное |
| — nigellae | ս. սեւասերիշի, սանձիլեղի | с. нигеллы |
| — papaveris albi | ս. սպիտակ խաշխաշի կամ մէկոնի | с. бѣлаго мака |
| — phelandri aquatici | ս. շողալի | с. водянаго укропа |
| — psillii | ս. սապուղանի | с. блошное сѣмя |
| — ricini | ս. գերչակի, տզկահատի, արքայադատի | с. клещевины |
| — sabadillae | ս. մկնդեղի | с. сабадиллы |
| — santonici | ս. բուխարակի | с. цытварное |
| — sinapis albae | ս. սպիտակ մանանեխի | с. бѣлой горчицы |
| — sinapis nigrae | ս. սեւ մանանեխի | с. черной горчицы |
| — staphisagriae | ս. ոջլադեղի | с. вшивое, мышій перецъ. |
| — stramonii | ս. արջնկոյզի | с. дурманное |

ՎԵՐՋ

Дозволено Цензурою. г. Эривань, 5 Января 1883 г. Типографія газеты «ПСАКЪ»

ՀՀ Ազգային գրադարան
NL0348741